

Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 3-ի N 1457-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

ՈՐՈՇՈՒՄ

2019 թվականի N -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի N 1457-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 3-ի <<Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության համակարգերի գինձառայողների, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության համակարգի փրկարարական ծառայողների իրային ապահովության կարգը (չափաքանակները) սահմանելու մասին>> N 1457-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված N 1 հավելվածում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1) NN 1, 2, 3 չափաքանակների աղյուսակներում համապատասխանաբար լրացնել 13.1.-րդ, 16.1.-րդ և 16.1.-րդ կետեր հետևյալ բովանդակությամբ.

<<

Հ/հ Անվանումը	Քանակը	Կրման ժամկետը	Ծանոթություն
Բաճկոն՝ սեզոնային, անթև	1 հատ	2 տարի	

>>,

2) NN 4 և 5 չափաքանակների աղյուսակներում համապատասխանաբար լրացնել 12.1.-րդ և 7.1.-րդ կետեր հետևյալ բովանդակությամբ.

<<

Հ/հ Անվանումը	Քանակը	Կրման ժամկետը	Ճանաչություն
Բաճկոն՝ սեզոնային, անթև	1 հատ	3 տարի	

>>, իսկ N 4 չափաքանակի առաջին սյունակի 12-րդ կետից հետո կրկնվող <<12.>> թիվը փոխարինել <<12.1.>> թվով,

3) N 6 չափաքանակի աղյուսակում՝

ա) 12-րդ և 14-րդ կետերի <<Քանակը>> սյունակում <<3 հատ>> բառերը փոխարինել <<6 հատ>> բառերով,

բ) առաջին սյունակի 14-րդ կետից հետո կրկնվող <<14.>> թիվը փոխարինել <<14.1.>> թվով,

4) N 7 չափաքանակի աղյուսակում՝

ա) լրացնել՝ 9.1. կետ հետևյալ բովանդակությամբ.

<<

Հ/հ Անվանումը	Քանակը	Կրման ժամկետը	Ճանաչություն
9.1. Բաճկոն՝ սեզոնային, անթև	1 հատ	2 տարի	

>>,

բ) 14-րդ կետում <<Քանակը>> սյունակում <<52 հատ>> բառերը փոխարինել <<6 հատ>> բառերով,

5) N 15 չափաքանակի աղյուսակի 39-րդ կետում <<Շահագործման ժամկետը>> սյունակում <<3 տարի>> բառերը փոխարինել <<1 տարի>> բառերով,

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: